

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մենք՝ Բելառուսի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը (ՌՍԴԽՀ), Ուկրաինան, որպես 1922 թվականի Միութենական պայմանագիրը ստորագրած ԽՍՀ Միության հիմնադիր պետություններ, այսուհետ՝ Բարձր պայմանավորվող կողմեր, փաստում ենք, որ ԽՍՀ Միությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ եւ աշխարհաքաղաքական իրողություն, դադարեցնում է իր գոյությունը:

Հիմնվելով մեր ժողովուրդների պատմական ընդհանրության եւ դրանց միջեւ գոյացած կապերի վրա, հաշվի առնելով Բարձր պայմանավորվող կողմերի միջեւ կնքված երկկողմ պայմանագրերը, ձգտելով կառուցել ժողովրդավարական, իրավական պետություններ,

մտադրվելով զարգացնել իրենց հարաբերությունները պետական ինքնիշխանության, ինքնորոշման անբաժանելի իրավունքի, իրավահավասարության եւ ներքին գործերին չմիջամտելու սկզբունքների փոխադարձ ճանաչման եւ հարգման, ուժի գործադրումից, տնտեսական կամ ճնշման ցանկացած այլ մեթոդներից հրաժարվելու, վիճելի հիմնախնդիրները համաձայնեցված միջոցներով կարգավորելու, միջազգային իրավունքի հանրաճանաչ սորմերի եւ սկզբունքների հիման վրա,

հաշվի առնելով, որ մեր պետությունների միջեւ բարեկամական հարաբերությունների, բարիդրացիական եւ փոխշահավետ համագործակցության հետագա զարգացումն ու ամրապնդումը համապատասխանում են նրանց ժողովուրդների արմատական ազգային շահերին եւ ծառայում են անվտանգության ու խաղաղության գործին,

հաստատելով իրենց հավատարմությունը Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության, Հելսինկյան Եզրափակիչ ակտի եւ Եվրոպայում համագործակցության եւ անվտանգության վերաբերյալ խորհրդակցության այլ փաստաթղթերի նպատակներին ու սկզբունքներին, պարտավորվելով պահպանել մարդու եւ ժողովուրդների իրավունքների վերաբերյալ միջազգային հանրաճանաչ սորմերը, պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈՂՎԱԾ 1

Բարձր պայմանավորվող կողմերը ստեղծում են Անկախ Պետությունների Համագործակցություն:

ՀՈՂՎԱԾ 2

Բարձր պայմանավորվող կողմերը երաշխավորում են իրենց քաղաքացիներին, անկախ նրանց ազգությունից կամ այլ տարբերություններից, հավասար իրավունքներ եւ ազատություններ: Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը երաշխավորում է մյուս կողմերի քաղաքացիներին, ինչպես նաեւ իր տարածքում բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց, անկախ նրանց ազգային պատկանելությունից կամ այլ տարբերություններից, քաղաքացիական, քաղաքական, սոցիալական, տնտեսական ու մշակութային իրավունքներ եւ ազատություններ՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային հանրաճանաչ սորմերին համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 3

Բարձր պայմանավորվող կողմերը, ցանկանալով նպաստել իրենց տարածքներում բնակվող ազգային փոքրամասնությունների էթնիկական, մշակութային, լեզվական եւ կրոնական ինքնատիպության եւ ստեղծված եզակի էթնամշակութային տարածաշրջանների արտահայտմանը, պահպանմանը եւ զարգացմանը, դրանց վերցնում են իրենց պաշտպանության ներքո:

ՀՈՂՎԱԾ 4

Բարձր պայմանավորվող կողմերը կզարգացնեն իրենց պետությունների եւ ժողովուրդների իրավահավասար եւ փոխշահավետ համագործակցությունը քաղաքականության, տնտեսության, մշակույթի, կրթության, առողջապահության, շրջակա

միջավայրի պահպանման, գիտության, առելտրի, հումանիտար եւ այլ բնագավառներում, կաջակցեն տեղեկության փոխանակմանը, բարեխղճորեն եւ անշեղորեն կպահպանեն փոխադարձ պարտավորությունները:

Կողմերն անհրաժեշտ են համարում նշված բնագավառներում համագործակցության մասին համաձայնագրերի կնքումը:

ՅՈՒՐԱԾ 5

Բարձր պայմանավորվող կողմերը ճանաչում եւ հարգում են միմյանց տարածքային ամբողջականությունը եւ համագործակցության շրջանակներում գոյություն ունեցող սահմանների անձեռնմխելիությունը: Նրանք երաշխավորում են սահմանների բաց լինելը, քաղաքացիների տեղաշարժման ազատությունը եւ տեղեկության փոխանցումը համագործակցության շրջանակներում:

ՅՈՒՐԱԾ 6

Համագործակցության մասնակից պետությունները կհամագործակցեն միջազգային խաղաղության եւ անվտանգության ապահովման, ռազմական ծախսերի եւ սպառազինությունների կրճատման արդյունավետ միջոցների իրականացման գործում: Նրանք ձգտում են բոլոր միջուկային սպառազինությունների մեկուսացմանը, համընդհանուր եւ լրիվ զինաթափմանը միջազգային խիստ հսկողության ներքո:

Կողմերը կհարգեն չեզոք պետության եւ ոչ միջուկային գոտու կարգավիճակի հասնելու միմյանց ձգտումը:

Համագործակցության մասնակից պետությունները կպահեն եւ կպահպանեն միավորված հրամանատարության ներքո ընդհանուր ռազմաստրատեգիական տարածությունը, ներառյալ միջուկային զենքի նկատմամբ միասնական վերահսկողությունը, որի իրականացման կարգը կարգավորվում է հատուկ համաձայնագրով:

Նրանք նաեւ համատեղ երաշխավորում են ստրատեգիական զինված ուժերի տեղակայման, գործելու, նյութական եւ սոցիալական ապահովման անհրաժեշտ պայմաններ: Կողմերը պարտավորվում են անցկացնել զինծառայողների եւ նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության եւ կենսաթոշակային ապահովման հարցերով համաձայնեցված քաղաքականություն:

ՅՈՒՐԱԾ 7

Բարձր պայմանավորվող կողմերը ընդունում են, որ Համագործակցության ընդհանուր համակարգող ինստիտուտների միջոցով իրավահավասար հիմքով իրականացվող նրանց համատեղ գործունեության ոլորտին են վերաբերում.

- արտաքին քաղաքական գործունեության համակարգումը,
- համագործակցությունը ընդհանուր տնտեսական տարածության, համաեվրոպական եւ եվրասիական շուկաների ձեւավորման եւ զարգացման մաքսային քաղաքականության բնագավառներում,
- համագործակցությունը տրանսպորտի եւ կապի համակարգերի զարգացման բնագավառում,
- համագործակցությունը շրջակա միջավայրի պահպանման բնագավառում եւ մասնակցությունը բնապահպանական անվտանգության միջազգային համապարփակ համակարգերի ստեղծմանը,
- միգրացիոն քաղաքականության հարցերը,
- կազմակերպված հանցավորության դեմ պայքարը:

ՅՈՒՐԱԾ 8

Կողմերը գիտակցում են Չեռնոբիլյան աղետի համամարդկային բնույթը եւ պարտավորվում են միավորել եւ համակարգել իրենց ուժերը՝ դրա հետեւանքները նվազեցնելու եւ հաղթահարելու համար:

Այդ նպատակով նրանք պայմանավորվել են կնքել աղետի հետեւանքների ծանրությունը հաշվի առնող հատուկ համաձայնագիր:

ՅՈՒՐԱԿՆԵՐ 9

Սույն Համաձայնագրի նորմերի մեկնաբանման եւ կիրառման վերաբերյալ վեճերը ենթակա են լուծման համապատասխան մարմինների միջեւ բանակցությունների միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում, պետությունների եւ կառավարությունների ղեկավարների մակարդակով:

ՅՈՒՐԱԿՆԵՐ 10

Բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը իրեն իրավունք է վերապահում սույն Համաձայնագրի կամ դրա առանձին հոդվածների գործողությունը կասեցնել՝ այդ մասին Համաձայնագրի մասնակիցներին մեկ տարի առաջ ծանուցելով:

Սույն Համաձայնագրի դրույթները կարող են լրացվել կամ փոփոխվել Բարձր պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

ՅՈՒՐԱԿՆԵՐ 11

Սույն Համաձայնագրի ստորագրման պահից այն ստորագրած պետությունների տարածքներում չի թույլատրվում երրորդ պետությունների, այդ թվում՝ Նախկին ԽՍՀ Միության, նորմերի կիրառում:

ՅՈՒՐԱԿՆԵՐ 12

Բարձր պայմանավորվող կողմերը երաշխավորում են Նախկին ԽՍՀ Միության պայմանագրերից եւ համաձայնագրերից բխող միջազգային պարտավորությունների կատարումը:

ՅՈՒՐԱԿՆԵՐ 13

Սույն Համաձայնագիրը չի շոշափում երրորդ պետությունների նկատմամբ Բարձր պայմանավորվող կողմերի պարտավորությունները:

Սույն Համաձայնագիրը բաց է Նախկին ԽՍՀ Միության բոլոր անդամ պետությունների, ինչպես նաեւ՝ սույն Համաձայնագրի նպատակներն ու սկզբունքները կիսող այլ պետությունների միանալու համար:

ՅՈՒՐԱԿՆԵՐ 14

Համագործակցության համակարգող մարմինների գտնվելու պաշտոնական վայրը Մինսկ քաղաքն է:

Նախկին ԽՍՀ Միության մարմինների գործունեությունը Համագործակցության մասնակից պետությունների տարածքներում դադարեցվում է:

Կատարված է Մինսկ քաղաքում 1991 թվականի դեկտեմբերի 8-ին, երեք օրինակից, յուրաքանչյուրը՝ բելառուսերեն, ռուսերեն եւ ուկրաիներեն, ընդ որում 3 տեքստերն էլ հավասարազոր են:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի փետրվարի 18-ից:

